

Գետնափոր տուն Հայոց. — Maison souterraine en Arménie.

հարաւոյ՝ Թոխաթ, Ճաղատոս հզօր գետ, և յելից՝ Պինգոլ, Սաֆիր-լայ, Տէրէ-Բոյ, Ճիխէրլէն, Աշի-լայ, Թոխրէան-Բոյ, և այլն, յորոց ոմանք ի Սոհունդայ ի-ջանեն. իսկ Աշիլայ որ և Սոբիա-գոլ որ առ Դավրիժաւ անցանէ՝ ի բացուստ ի ստորոտից Սաւալանայ գայ. ի Սոհունդայ խաղան ընդ արևելս Շահ-Բոյ և Գարանիս, և այլովք հանդերձ օժանդակեն զԳրզրզ-Իսզէյն գետ մեծ (Գովզան) զեկեալն ի Մարաց, որ և հատեալ զԿիլան աշխարհ Թաւրի ի ծով Կասպից: Ի լերանց Գարատաղլս բղխեն Ասու գետ և խառնեալ ընդ Գարասու՝ որ յելից հիւսիսոյ Սաւալանայ և ի կողմանց Թաւրիզայ գայ, գործեն զՏէրէ-Բոյ օժանդակ Երասխայ: — Եւ այսքան վասն հողոյ և ջրոյ Հայաստանի շատ լցի. յիշեսցուք և զգաս:

26. ՑԵՂԱՆԱԿՔ ՕԴՈՑ Թերևս աւելի քան զհողն նշանաւոր են չափով զուգախառնութեանն, և զանազանեալք ի շրջակայիցն աշխարհայ, նա և յիւր ուրոյն մասունս երկրին. որ ըստ աշխարհագրական գրից ունի զմիջավայրս բարեխառն գօտեաց, և համաստիճան է երկնակագոյն և անուշագոյն վայրաց աշխարհի, իմա՝ Սպանիոյ, Իտալիոյ, Յունաստանի և Փ. Ասիոյ, այլ ցրուութեամբ առաւելեալ յոյժ ոչ քան զնոսա միայն, այլ և քան զԳաղղիա և զԳերմանիա և զայլ ևս աշխարհս Եւրոպիոյ բաղում աստիճանօք հիւսիսագոյնս քան զնա. մինչդեռ յորովք ի նշանաւոր քաղաքաց համաստիճան վայրացն Յեւրոպա վայելեն գարուն մշանջենաւոր կամ ամառն չափաւոր, ի Հայս ձմեռն ութամսեայ ունի զհարաւագոյնսն ևս քան զնոսին, և բաղում ուրեք նստի ձիւն զկէս ամին: Ի վաղուց հետէ համբաւեալ է ձմեռնն հայկական առ քերդողս Լատինաց, և առ Հարս, և առ հնագոյնսն քան զնոսա՝ զօրավարս և աշխարհագիրս Յունաց և Հռովմայեցւոց. ի հիւսիսակողմն աշխարհին և ի բարձրաւանդակս հարաւոյ՝ ձմեռն սկսանի ի հոկտեմբերս ամսեան և տևէ ցմայիս. շատք ի գետոց ի սպառ պաղին, և ջուրք և գիւրք և դարք առ հասարակ դաշտանան ի միատարր ձուլած ձեան, որ 4–6 ոտնաչափ բարձրացեալ ծածկէ զերեսս երկրի. և ի տեղս տարափոյ նորին և ի բբոյ՝ բաղում տագնապ հասանէ և վտանգ ուղևորաց, և է ուրեք զի ընդ հիւսով ձեանն ծածկին ողջոյն կարաւանք. վասն որոյ ի հնուց հետէ սովորեալ է նոցա կրել ձողս երկայնս, որպէս պատմէ և Սորաբոն, և ցցել արտաքս ընդ ծածկոյթ ձեանն վերարկելոյ, որպէս զի լցի նշան այլոց անցաւորաց կամ ռահվիրայից, և զերծանիցին թաղեալքն: Իսկ բնակչաց երկրին ի սկզբանց անտի հնարս իմացեալ է շինել տունս դեռնափորս կամ կէս ստորերկրեայս ի կողս բլրոց և ձորոց, զորոց նախ և առաջին զոյց առնէ Քսենոփոն պատմիչ և զօրավար, որ 400 ամաւք յառաջ քան զԹուականութիւն Փրկչին՝ Էանց ընդ սառամանիս Հայոց. և ցայսօր ժամանակի նոյն ձեւ և նոյն տարազ է տանցն, մարդակաք ի ներքուստ բարձեալ, և դստիկոնս արկեալ, մի միայն ունելով մուտս և ելս լուսոյ և ծխոյ, մարդկան և անասնոց, զի առ երի կայ և ախոռ նոցին և չունչ նոցա ջերուցանէ զանկուտն: Երկարագոյն է ձմեռն Բարձր Հայոց, ուր եօթն և ութ ամիս ձիւնէ. յետ նորա Այրարատեան կողմանց Երևանայ, ուր թէպէտ և հինգ ամիս միայն նստի ձիւն, այլ ցուրտ ոչ ինչ պակաս ի Կարնոյ, և ինչանէ ջերա-